

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԱՅԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարվանը 6 ռուբլ.:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում

Օտարաբաղադրանքը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

— Ինչ էր «Մշակը» և ինչ է այժմ. — Դեռ քիչ էր, և ոչ թիվ էր. Մի նկատողություն էր. նա մեկ էին-Բայազետից: Նամակ էին-Նախիջևանից: Նամակ Մատուրեանից: Ներքին լուրեր: Ստորագրիչներ տեսնում էին: Դանիալ, Հնդկաստան, Անգլիա: Արտաքին լուրեր: «Մշակի» հեղափոխություն: — Յայտարարություններ: — Տեղեկացույց:

Ինչ էր «ՄՇԱԿԸ» եի Ինչ է ԱՅԺՄ

«Մշակի» թշնամիների բերանից լսվում է շատ անգամ հետևեալ խօսքը. «այդ լրագրից ոչինչ չը կայ ուստաց լրագրիների մէջ արտոտպելու համար, այդ լրագիրը շատ քիչ իրական նիւթ է պարունակում իր մէջ. փաստերի կողմից շատ աղքատ, նա միայն դատողութիւններով լի է և աւելի կարող է համարվել իրան խմբագրի անձնական օրգան, քան թէ հասարակական թերթ...»

Արդեօք ուղիղ է այդ խօսքը: «Մշակի» վերջին տարիներին վերաբերել այդ տեսակ դատողութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ կատարեալ կողմնապահութիւն և կոյր թշնամութիւն:

Վերջին տարիները «Մշակ» լրագիրը ներկայացնում է հարուստ նիւթեր թէ իր ներքին թէ արտաքին բաժիններում և թէ բանասիրական բաժնում: Կա բազմակողմանի և նիւթաւոր առաջնորդող յօդուածներ էլ ունէր և այդ բանով պարտական էր լրագրի միւս մասերի հարուստ և բազմակողմանի նիւթերին: Վերջին տարիներին ներքին, բայց մանաւանդ արտասահման թղթակցութիւնները «Մշակի» մէջ կարող էր լինէին պատուաւոր տեղ բռնել մինչև անգամ ուստաց մայրաքաղաքների թերթերի էջերի մէջ:

Այն րօպէից, երբ «Մշակը» ամենօրեայ դարձաւ, աւելի էլ բազմացան նրա մէջ դրական փաստերով լի Ռուսաստանի թէ եւրոպական մասից, թէ Կովկասից ստացվող նիւթաւոր, փաստերով լի թղթակցութիւնները: Ամենալաւ ապացոյց մեր ասածի ճշմարտութեան կարող է լինել

այդ տարվայ ներքին և արտերկր բաժնի հարատւութիւնը և բազմակողմանիութիւնը:

Իսկ ինչ որ վերաբերվում է «Մշակի» գոյութեան առաջին երկու, երեք տարիների, գուցէ մասամբ արդար է մեր լրագրի վերաբերութեամբ մեր թշնամիների մեղադրանքը: Բայց դա էլ իր յարգելի և դրական պատճառներն ունի:

Նրբ մենք սկսեցինք հրատարակել մեր թերթը, լրագրութիւն ասած բանը, այդ բառի բուն նշանակութեամբ չը տեսնված բան էր հայերի մէջ: Հասարակական խնդիրները քննած դրութեան մէջ էին, նրանց զարթեցնելու, քննելու և ձեւակերպելու համար հարկաւոր էր մի դիտող աչք: Այդ բաւական չէ. հարկաւոր էր կըրթել, պատրաստել գործերին, աշխատակիցներին: Հայը դեռ ևս անսովոր էր գիտել իրան չըջապատող կեանքի և երեւոյթների հասարակական կողմը և այդ երեւոյթների նշանակութիւնը:

«Մշակը» մի ամբողջ ուսուցանարան էր շատերի համար: Գրքերը սկսեցինք հետզհետեւ պատրաստվել, կրթվեցան:

Այդ է գուցէ պատճառը, որ «Մշակը» երկար ժամանակ, իր գոյութեան առաջին տարիները կրում էր իր վրա իրան խմբագրի, կամ խմբագրութեան մի քանի անդամների անձնական օրգանի գոյնը:

Այն ժամանակ հարկաւոր էր արուեստական կերպով ինդիքներ յարուցանել...

Այժմ մենք այդ միջոցների մէջ էլ հարկաւորութիւն չունենք: Այժմ մեր ներքին կեանքը լի է ինքնուրոյն խնդիրներով, որոնք իրանք իրանց են ծնվում, յարուցվում և ձեւ ստանում:

Եթէ մի ժամանակ «Մշակը» անձնական օրգան էր, նա վաղուց է արդէն որ հասարակական օրգան է դարձել և մենք հաւատացած ենք որ քանի գրնում է, նա հետզհետեւ հասարակական ոյժ է դառնալու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

«ԿԱՅԿԱՅ» լրագրի մէջ կարգում ենք հետեւել նկատողութիւնը:

«Քոյլ տուէք նկատել, որ իմ կարծիքով ասեղիզացիայի գործը Քիֆլիսում անկանոն է դրած: Նա այս իրողութիւնը մի շարք նրկատողութիւններով կը հաստատուի իր ժամանակին, բայց առ այժմ ամենքը կարող են համոզվել իմ ասածի մէջ, եթէ կարգին և ի նկատի առնեն «ԿԱՅԿԱՅ»-ում տպած յօդուածները և իր իր մէջ ասեն իրացի այլ գործի ընթացքի մասին:

Ասեղիզացիայի բաժինների գլխաւորների համար կանոնները շատ ուշ հրատարակվեցան: Ոչ թէ միայն բնակիչները (մանաւանդ աղքատ դասը) մինչև այժմ չը գիտեն հիմնաւոր թէ ինչ պէտք է անեն ասեղիզացիայի համար, այլ մինչև անգամ առողջական ստորօրտանները, որոնք յետոյ գլխաւորներ անուանվեցան, չունեն հրահանգներ, որոնցից կարողանային օգուտ քաղել և միատեսակ միջոցներ գործ դնել Քիֆլիսում տարածվող հիւանդութեան գոյանալու և զարգանալու առաջն առնելու համար:

Վրոյժհետ բնակիչներին սկզբից չէին մեկնում այս կամ այն գործ գրվող միջոցի նպատակը և նշանակութիւնը, նրանք ծածկում են իրանց աների մէջ կողո տղամարդիկների թիւը, վախճալով, որ նրանցից զինուորներ կանեն: Կը վերջացնեմ ներկայ նկատողութիւնը մի հայեացք գցելով ասեղիզացիայի գլխաւոր գործողներին մասնագիտութիւնների վրա: Ասեղիզացիայի բոլոր բաժինների գլխաւորը մանկաբարձ է, առաջին բաժնի գլխաւորը տեխնիկ է, երկրորդ բաժնի իրաւաբան, երրորդին՝ զինուորական ինժեներ, չորրորդին՝ սարերի ինժեներ, հինգերորդին՝ քիմիկոս: Ի հարկէ քիմիկոսը, տեխնիկը, ինժեները այսպէս թէ այնպէս կարող են օգտուաւոր լինել իւրաքանչիւր բաժնում, բայց կրթութեամբ և պարագմունքով սանիտար-հիգիենիստներ չը լինելով, չեն կարող հիմնաւորապէս տանել ասեղիզացիայի նշանաւոր գործը: Շատ քիչ կարող են օգնել և բժշկները, եթէ նրանք այնպիսի բազմակողմանի պարագմունքներ կունենան, ինչպէս չորրորդ բաժնի բժիշկը: Այս պարտը պարտաւոր է ամեն օր այցելել քաղաքի բժշկանոցը, մի և նոյն ժամանակ նա քաղաքային բժիշկ է հաւաքարի, Կոլոնիայի և Կուկիայի բաժինների: Նոյն բժիշկը քաղաքային հիւանդանոցում պարտական է պարապել դատատանական բժշկական հետազոտութիւններով: Պէտք է նկատել նոյնպէս որ չորրորդ բաժնի մասը պարունակում է իր մէջ ամբողջ Հաւաքարը սկսած Կուր գետից, Սաղից, սուրբ Կարապետից մինչև Մամուկի անուանված գիւղը: Այդ մասը շատ մեծ է, որի համար, մեր կարծիքով մեկ մինչև անգամ բոլորովին ազատ բժիշկին էլ բաւական չէ:

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹԻՑ

15 ապրիլի

Մինչև 1827 թւականները Հին-Բայազետի իր սանձակով մի աւատական իշխանութիւն էր

խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կօպէկ

կազմում Թիւրքիային յայտնի հարկ վճարելով, իսկ երբեմն էլ ընդգիւծութիւն էր ցոյց տալիս: Բայց 1827 թւերից, այն է, ռուս-թիւրքաց պատերազմից յետոյ, այդ աւատական իշխանութեան գոյութիւնը վերջացնելով, Թիւրքիան, Բայազետի իր սանձակներից մինը լինեց: Մինչև այդ ժամանակ Բայազետի մեծամասնութիւնը, ինչպէս պատմում են տեղացի ծերունիք, կազմում էր հայ ազգաբնակչութիւնը, մօտ 6000 գերտաստուն, այնուհետև հայերը հետզհետեւ դադարեցին ընդհանուր հայապատկան լինելու: Նոր-Բայազետի, և նրա գաւառը, Ալէքսանդրօպօլ և Էլմիստինի գաւառի կարգի գիւղ, վերջին պատերազմից առաջ մնացել էր այդ տեղ 200 ընտանիք միայն:

Հայերը այս քաղաքում պարապելով վաճառականութեամբ, մանրավաճառութեամբ և գանապան արհեստներով քաղաքի հարուստ դասին էին կազմում համեմատելով թիւրք ազգաբնակչութեան հետ: Հայերը, այժմ առանց բացառութեան, շնորհիւ բարբարոս թիւրքաց, կողոպտված են և յետին աղքատութեան հասցրած, նա հետաքրքրվելով այցելիցի մի քանի տուն և ականատես եղաւ, թէ ինչպէս ողորմելիք պատապարով են կիսաւեր տան մի անկիւնում, չոր գետնի վրա, կամ շատ շատ մի քիչի վրա, իսկ գիւղերից... գիւղերն էլ բոլոր գերդաստունը (շատ սակաւ բացառութեամբ) անց են կացնում մի քիչի վրա և մի կարպետի, կամ շրտա վերմակի տակ:

Երբ 1877 թւի մարտ ամսի վերջերում տեղական թիւրք ազգաբնակչութեան առաջաւոր անձինք լրագրիներից և տեղական փայայից տեղեկանում են, որ պատերազմը Ռուսաստանի հետ անդադարեցել է, ժողով կազմելով հրահանգ են հայ երեւելի անձանց և հետեւել պայման են կապում երգմամբ հաստատելով. «Նրբ պատերազմի բաղդը օգնի Ռուսաստանին և վերջինս տիրապետի քաղաքին, հայերը, ինչպէս Ռուսաստանին հաւատարմից ազգ, պարտաւոր են թիւրքերի ապահովութիւնը պաշտպանել ուստաց զօրքերի դէմ, իսկ եթէ հաճախատանը յաղթող հանդիսանայ, թիւրքերը պարտաւոր են պահպանել հայերին թէ տաճիկներին և թէ քրդերին յաճախութեամբ: Այդ պայմանի հիման վրա, երբ ուստաց երեւանեան զօրաբանակը գնեկաւ Տեր-Ղուկասովի առաջնորդութեամբ երևում է Չինգիլեան բարձրաւանդակի վրա Բայազետի հանդէպ, թիւրքերը իրանց բոլոր շարժական կաշքերը յանձնելով հայերին՝ պատաստանում են վերջինների տները իրանց հովանաւորութեան ներքո և հայերը ամենայն ազնւութեամբ և բարեխղճութեամբ կատարում են իրանց երգմամբ հաստատած պայմանը: Այնպէս, որ երբ ապրիլի 15-ին գիւղերը թիւրքաց բերդապահ զօրքը, թողնելով Բայազետը հեռանում է գեպի վան և 15-ին քաղաքացիք աղ ու հացով դիմելով ուստաց զօրաբանակին անձնատուր են լինում, հայերը են զգուշութիւն գործ են դնում, որ ոչ մի զրկանք չը հասնի թիւրքերին և եթէ պատահում են ուստ անկանոն զօրքերի կողմից գեպի թիւրքերը որպիսի և իցէ աննշան անկարգութիւններ, իսկոյն հայերը որոնելով յանցաւորը յանձնում են զինուորական իշխանութեանը և վերջինը ամենայն ստատկութեամբ պատժում է յանցաւորներին: Իսկ մի քանի օր անցիկուց յետոյ թիւրքերը, տեսնելով իրանց բոլորովին ապահով գրութեան մէջ, բոլոր կաշքերով տեղափոխվում են իրանց տները: Իսկ թիւրքերը ահա ինչպէս վարվեցին հայերի հետ: Երբ Ծէյն Ձէլալեդինի ամբողջ Բայազետի վրա հեռացած, բերդապահ զօրապետի հետ յանդիմանի սկզբնեւում պաշարից Բայազետ քաղաքը, թիւրքերը հրաւիրում են հայերին իրանց տները պաշտպանել: քրդերի յարձակումների դէմ և վերջիններս պայմանելով նրանցից երախտագրութեան, իշխաւ պայմանի համաձայն դիմում են թիւրքերի պաշտպանութեանը, տանելով իրանց բոլոր թէ շարժական կաշքը և թէ առեւտուր դրամ: Երբ օր անցնելուց յետոյ թիւրքերը պատահաւ բերելով, որ իր թէ ձեւերը (այդպէս են կոչվում Ձէլալեդինի ամբողջ) մտադիր են բոլոր

քրիստոնեական կոտորել, հարկադրում են հա-
յերին հեռանալ Բայազէթից, ուստի և հայերը
թուով 500 հոգի մի քանի թիւեր զինուորների
պաշտպանութեան ներքոյ դիմում են Ազամա-
նու կոչված քուրդերի ցեղապետ Միրզա-աղայի
վրանը, Վերջինը արդարեւ շատ քաջցործեամբ
ընդունում է հայերին և մօտ մի ամիս սրանց
կերակրում է իր հաշուով և առաջարկում է իր
մօտ սպասել պատերազմի ելքին, սակայն հա-
յերը, երկիւղ կրելով ճեղքներէ, անցնում են
պարսից առհասարակ մերկ և զուրկ ամեն ինչից:
Հայերի Պարսկաստան գաղթելու ժամանակ նը-
րանցից 107 հոգի սպանուիւմ են քուրդերից և 250
հոգի մնում են Պարսկաստանում: Եւրոպայի
օգին անտուր լինելու պատճառով ինչպէս պա-
տահնց նոյնը խեղճ գաղթականներն էրեանի
նահանգում: Հայերը անտանելի նեղութիւններ
են կրել մինչև Մակու համայնը, նրանց առաջ
մտնելին են իրանց որդիներին, բռնաբարել են
օրիորդներին և ամուսններին: Պատմութեամբ են,
քուրդից մէկը սրով մահացուցել վէրք է տալի
մի կնոջ իր երիտասարդ ամուսնի առաջ և չը
բաւականանալով դրանով, կնոջ ստիճքը դեռ
կենդանի կտրում է, այնպէս, որ ողորմելին
չը տանելով ցաւին իսկոյն աւանդում է հոգին:
Այս բոլոր աղետից և դաղանաբարոյ մուսուլ-
մանները բարբարոսութիւնների նկարագրերը ամ-
փոփոխում է մի գրութեան մէջ հայերի Մակուից
Կ. Պոլսի պատրիարքին և աղգային կենդրոնա-
կան վարչութեանը ուղղած, ուստի և աւելորդ
համարելով մանրամասնաբար կրկին նկարագրել
այդ աղետները հարկաւոր համարելի յիշած գրու-
թեան պատճէնը կցել նամակիս սղագրելու հա-
մար, եթէ հարկ կը համարվի: Ինչպէս ասացինք
հայերը հաղի մաղապարծ լինելով և Մակու
գաղթելով այն տեղ օգնութիւն են գտել տեղացի
եղբայրներից: Մակու համայնուց յետոյ, երբ
Իսթանբուլ-փաշան իր զորաբանակը կարգաւորել է
Իզմիրու հանդէպ Չինգիլեան բարձրաւանդակի
ստորոտում, հայերը դիմում են նրան և թէն
Իսթանբուլ-փաշան խոստանում է սրանց որոնել
կողոպտված կաթը և վերադարձնել, այն պայ-
մանով միայն, որ նրանք վերադառնան Բայա-
զէթ: Մակուի հայերը լաւ հասնալով, որ իրանց
կաթը ստանալով և կրկին Բայազէթում մնալով
իրանց կեանքը վտանդի մէջ դնել է նշանակում,
հրաժարվում են Բայազէթ վերադառնալուց,
հետևապէս և զրկվում են իրանց կաթերից: Այդ
ժամանակ անգլիացի գեներալ Ալեքսը, որ Իզ-
միր-փաշայի զորաբանակի մէջն էր գտնվում,
հրաւիրում է երկու հայ իշխաններին և նրանց
հետ պատահած անցքը լսելով մեծամեծ խոս-
տումներ է անում Անգլիայի միջնորդութեամբ
բաւականութիւն պահանջել Օսմանեան տէրու-
թենից: Այդ հիման վրա հայերը ցուցակ կազմե-
լով իրանց յափշտակված կաթերի, որից երեւում
է, որ հայերը այդ յափշտակութենից վնասվել են
605,600 բուրլ, և ներկայացնում են պ. Ալեքսե-
լին: Այժմ բայազէթից թուով 110 տուն վե-
րադառնալով Բայազէթ իրանց տները և կըր-
պակները մեծ մասը քանդված և այրված գտան,
նրանք զրկված են միջոցներից շարունակել իրանց
գործը: Ամբողջ Բայազէթում արհեստաւորին ան-
հրաժեշտ գործիքներից ոչ մէկը չը կան, և ար-
հեստաւորները դրամ չունենալով հարկաւոր գոր-
ծիք ձեռք բերելու, բոլորովին անգործ են մնացել:
Վաճառականը մի կողմէ չունենալով շարունա-
կել իր արհեստը, բարձեւ պարագայ է անցկաց-
նում իր օրերը, քաջառութեամբ այն բաղաւոր-
ների, որոնք վերադառնալով կարողացել են
իրանց անշուն (սիւսիքը) քուրդերից հաւաքել:
Կամ թէ իրանց տները յատակում պահած մի
անշուն մասն իրանց կանանց ոսկեղէն և ար-
ծաթեղէն զարդարանքից գտնելով ծախել և
իրանց ապագայ վիճակը բարելոքելու ձգտել:
Բայց այդպիսիների թիւը շատ աննշան է, շատ
չափ մի տասնեակ մարդ, իսկ մնացեալները ա-
ռանց խորութեան կարօտ են օգնութեան: Հար-
կաւոր է ինձ այստեղ յիշել որ երբ Բայազէթի
այժման նաչալիիկ Նզոր Իվանիչ Մանդալովը
գալով Բայազէթ նկատեց, որ մի քանի ընտա-
նիք օրական հացի կարօտ մի քանի օրով քաղ-
ցած են մնում, մարդասիրաբար յանձն է առ-
նում 13 ընտանիք իր ծախսով կերակրել երեք
ամսվայ ընթացքում, մինչև, որ գեներալ Լադ-
րելի Թիֆլիսի բարեգործական կոմիտեից ստա-
ցած 2000 բուրլ տեղական իշխանութեան կար-
գադրութեամբ բաժանվում է քաղաքի և գիւ-
ղերի կարօտեալներին որով միջոց արվեցաւ
նրանց հայթաթել իրանց ապրուստը մինչև մի
քանի ամիս: Այս անգամ բաւականանալով
Բայազէթի անցքը և նրա ժողովրդի վնասը
նկարագրել, խոսքանում եմ միջոցներին և կա-

րողութեան ներածին չափ նկարագրել Բայա-
զէթի նահանգի հայ գիւղերը կրած վնասները և
արդեան վիճակը ի տեղեկութիւն հայ ազգի
լրագրի միջոցաւ:
Բայազէթի հասարակութիւնը պարտք հա-
մարեց խնդրել ինձ «Մշակի» միջնորդութեամբ
հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել ուս-
սատանցի իրանց եղբայրակիցներին, որոնք մե-
ծանոթութեամբ մեկնել են իրանց թշուառ և ող-
բայրներին օգնութեան ձեռք, Թիֆլիսի մարդա-
սիրական կոմիտեին իր անխնայ գործունէու-
թեան համար և գեներալ-լէյտենանտ Լա-
դարելին, որ ազգասիրաբար և հայրաբար յանձն
է արել միջնորդել յիշեալ գումարը Բայազէթի
և չլակալ հայ գիւղերի կարօտեաց նուիրել:
Նշելով եւս ևս իմ կողմից, որ այդ փողերով ա-
զատվեցին մի քանի ընտանիք, որոնք ոչ թէ
զրկված են իրանց կարողութենից, այլ և զրկված
են աշխատող ձեռքերից, հետևապէս և բոլոր
այն միջոցներից, որով կարող կը լինէին հայ-
թաթել իրանց օրական պարէնը և սովման
լինելուց ազատվել:
Մարտիրոս Տէր-Պետրոսեանց
ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԱՆԻՑ
15 ապրիլի
Դէպի Երևանի ճանապարհը հիւսիսային կող-
մից Նախիջևանին ամենամօտիկ գիւղն է որը
փոքրիկ կաւաքարեայ թմբակով հաղի բաժան-
վում է քաղաքից և թեքվում է աղանալների
բլրակների և դաշտակի կողմը: Ալիպապա, փոք-
րիկ և բոլորովին հայաբնակ է. ունի 55 տուն,
173 արական և 95 իգական հոգուց բաղկացած.
որոնց մէջ գտնվում են 32 արական զրազէտ-
ներ և մի իրայն իգական գրագէտ, ամուսնաւոր
77 զույգ են:
Այստեղ նկատելի է, որ արական սեռը մօտ
երկու անգամ աւելի է իգականից, և այդ արա-
կաններումը երեք ծերունիք ետեմանսից աւելի
տարիք ունեն:
«Համգա» անունով ծերունին 82 տարեկան է:
Իգական սեռուցը 50 տարեկանից չէ անցնում,
Հինգուկում երբ մեր ձեռքումը եղած ցուցակների
վրա:
Ալիպապայից գաղթել են Վոյոյ գաւառի «Այ-
դաւար» գիւղիցը — 28 թւին իրանց անուանի գըլ-
խաւոր Իսխանդարի առաջնորդութեամբ:
Նոքա բնակվելով այդտեղ վերանորոգել են տ-
ւերակ և բարձի թողի արած Ալիպապա, Ի բնէ
ժիր և լաւ երկրագործներ լինելով նոքա տնկել են
բաւական թիւով այգիներ և պարտեզներ որոնցից
ստանում են գինի և օղի, իսկ այս գիւղի սեխը
հաշակված է Նախիջևանի գաւառում որը առաջ
է գալի մարդկանց և կանանց հաւատար աշ-
խատութեամբը և բաւական առատ:
Մինչև 73 թւականը երբ չը կար արաղ քա-
չելու հարկը (ակցիլ) — ալիպապայից ամբողջ
ձմեռը պարտաւոր էին Ուրմիայից եկած չամիչը
առնելով ու արաղ քաչելով որ նոքա վաճա-
ռում էին Նախիջևանի և Գարուրի գիւղերումը,
իսկ այժմ նուազել է այդ առուստուր ծանրակ-
ցիլով պատճառով: Երկու հարկը խաղաղաշափ
հոգ անցնող գիւղը մի թուրքի կալուած է որը
տարեկան մօտ երկու հազար բուրլ մուտք է
ստանում:
Գլխաւոր գոյութիւնը Ալիպապայի կայանում է
միակ և յորդահոտ աղբիւրի (քահրլիկ) վրա որը
բղկում է գիւղի բարձր գլխիցը և պտտեցնելով
երկու երեք միմեանց ներքև շինված ջրաղացներ
իջնում և ջրում է այգիներ և յանդը շարունակ
չափով:
Ոմանք ալիպապայիցիներից Նախիջևանումը,
խառնութ. և աւետուր ունեն:
Ընդհանրապէս ժիր, տնտես և խաղաղ բնու-
թեամբ մարդիկ են:
Փոքրիկ և փայտով ծածկված եկեղեցի կայ մօտ
40 թւականին շինված: Ուսումնարան չունեն, այլ
փոքրիկ սենեակներ շինված են եկեղեցու մօտ ու-
սումնարանի համար, բայց դեռ աշակերտ և ուսու-
ցիչ չեն մտել այդտեղ: Միակ քահանան որ հոլ-
վում է գիւղը, անկարող է ուսուցանելու, որով
հետև նա ևս հաղի կարողում և գրում է: Այս
գիւղի առաջին քահանան Տէր-Մարգարը առա-
ջին հայ ուսուցիչն է եղել Նախիջևանի գաւա-
ռական ուսումնարանում, եկած լինելով Տաճ-
կաստանից:
Մ. Խոնդակերդեանց

ՆԱՄԱԿ ՄԱՍՐԱՍԱՑԻՑ
12 ապրիլի
Մատրասա գիւղը գտնվում է Գամախի քա-
ղաքից մօտ 6 վերստաչափ հեռավորութամբ: Այս
գիւղը ունի մօտ 400 տուն հայ բնակիչներ որոնց
գլխաւոր պարագործները այգեգործութիւնն է:
Բնակիչների փոքր մասը միայն պարագործ
վաճառականներ, որոնք իրանց համալուրջային-
րի գինիները առնելով տանում են հեռավոր քա-
ղաքներ, մինչև անգամ Ռուսաստան վաճառելու
համար: Առհասարակ այս գիւղը երեւի է իր
գոյլի և անոյց գինի արտաբերելով: որը իր գե-
ղեցիկ յատկութիւններով բոլոր կովկասեան նա-
հանգում արտաբերվող ամենազնիւ գինինե-
րից պակաս չէ: Նշանաւոր է այս գիւղը մանա-
ւանդ իր հոյակապ, կոփածոյ քարերով կառու-
ցած եկեղեցով: որի նմանը, կարծեմ, հազիւ թէ
պատահի որ և է հայաբնակ գիւղում. քաղաքնե-
րում անգամ սակաւ կը գտնվի այսպիսի գեղեցի-
կաչէն եկեղեցի: Մատրասայիցիների ջերմեւանդ
առուածապաշտութեան ու բարեպաշտական
գոյացմանց ապացոյց կարող է համարվել այս
գիւղիցին:
Մատրասա բնակիչները մայրենի լեզուով չեն
խօսում, այլ մի տեսակ «թիւրք-պարսի» անուա-
նեալ բարբառով: Եւ կարող եմ հաւատալից, որ
այս գիւղում կան այնպիսի ծերագոյս և միան-
մայն գաւառիկ մարդիկ, որոնք մի ամենահա-
տարակ խօսք անգամ չեն կարող արտայայտել
հայերէն լեզուով, և հետեւաբար այս ուղիով լքել
վաղ թէ ոչ, պէտք է անցնեն հանդիմանալ աշ-
խարհը, առանց որ և է գաղափար ունենալու
իրանց հարազատ լեզուի վրա: Յաւալի իրողու-
թիւն է: Կան և այնպիսի անձինք, որոնք
իրանց անձնական գործերի և հաշիւների պատ-
ճառով աւելի են ունեցել յաճախ գտնվել գա-
նաղան հայաբնակ գիւղերում և քաղաքներում,
որով նրանք բաւական լաւ տեղեկակ են հայոց
լեզուին, սակայն նրանք ևս, իրանց գիւղում
եղած ժամանակ չեն կամենում գործածել այս
իրանց հարազատ մայրենի լեզուն: Կարծես իրանց
արժանաւորութենից սօսը համարելով: Կար նա-
խապաշարմունքը ինչեւր ասես, որ չէ ծնում:
Բայց ամենապակասն այն է որ մեր արծ. քա-
հանները, իբրեւ բարի և սրտացաւ հովիւներ
տեսնելով իրանց թշուառ հօտը այսպիսի ամենա-
խորին նախապաշարմունքների մէջ խորված,
փոխանակ ամեն միջոցներ գործ դնելու նրան
այս ցաւալի գրութենից աղաթելու համար, ոչ
միայն անտարբեր են մնում, այլ և իրանց ան-
սահման տգիտութեամբ օրինակ են լինում նրան
մի և նոյն դարեր նախապաշարմունքների մէջ
մնալու: Քահանաները մայրենի լեզուով չեն խօ-
սում մինչև անգամ եկեղեցուում:
Չը նայելով որ Մատրասա գիւղը Գամախու վի-
ճակի գիւղօրէից մէջ նշանաւոր տեղ է բռն-
նում, և համեմատաբար նրանցից նիւթապէս
աւելի ապահոված է, այնու ամենայնիւ մինչև
մի տարի առաջ չունէր մի ուսումնարան, ուր
նրա մանուկները գէթ կարողանային սովորել
իրանց մայրենի լեզուն: Մատրասայիցիների այսպիսի
մտաւորական անախանձելի գրութիւնը արձա-
գանք գտաւ մատրասեցի, բայց Գամախու վիճ.
կոնսիստորիայում ծառայող աստիճանաւոր պ.
Աբրահամ-բէկ Գահիկերեանցի սրտում, որը ցա-
ւակցելով իր հայրենակիցների խորին տգիտու-
թեանը, սկսեց ամեն միջոցներ գործ դնել նրանց
մէջ լուսաւորութիւն տարածելու համար: Իր նը-
պատակին հասնելու համար յիշեալ պարտը բազ-
մից յաճախում էր այս գիւղը և իր ընտանի
քաղցը և համադրել խօսքերով յորդորում էր իր
ազգակիցներին չը զբաղել հոգալ իրանց որդից
ուսում և դաստիարակութիւնը, որից միայն կա-
խված է նրանց ապագայ երջանիկ ու բաղդա-
ւոր վիճակը: Բարեբաղդաբար այս պարտնի քա-
րոնները ճշայն բարբառոյ յանապատիս չեղան:
Մատրասեցիք լսելով նրա յորդորները, և կար-
ծես իրանց դարերը թմբուկներից նոր արթնա-
նալով, սկսեցին այժմ ուրախութեամբ հոգալ
իրանց որդից կրթութեան համար: Այս նպա-
տակի համար նրանք պ. Գահիկերեանի խորհր-
դակցութեամբ և աջակցութեամբ իրանց միջոց
սկսեցին կամուր նախապատեւութիւններ ժողո-
վել, որից զբոյցաւ մօտ 1200 բուրլ: Այս գու-
մարը, ինչպէս նաև մի ուսումնարանի շուտափոյթ
կառուցումն յանձնվեցաւ հասարակութենից ըն-
տրված վեց հոգաբարձուներին, որոնցից մինն
էր պ. Գահիկերեան. 1877 թւին յունվարին արդէն
այս ուսումնարանի շինութիւնը բոլորովին ա-
ւարտված ու բարեկարգված էր, ուստի այստեղ

հրաւիրվեցաւ դասախօսութեան համար մի ու-
սուցիչ, Ուսումնարանի բացման հանդէսը, որին
ներկայ էր նաև գերապետի թաղէսու եպիսկո-
պոսը, փառաւոր կերպով կատարվեցաւ: Հա-
ղիսաւոր պատարագից յետոյ, եկեղեցական դասը
բոլոր ժողովրդականաց հետ միասին գլխից նրա-
կառոյց ուսումնարանը, ուր սրբազան առաջ-
նորդը մի համառօտ ու ազգու ճառ ասաց, որով
նախ գովեց հասարակութեան այս մեծագործ
հիմնարկութիւնը, ապա բացատրելով նրանց ուս-
ման կարեւորութիւնները, յորդորեց նրանց խառ-
տութեամբ և խոհմութեամբ հոգալ իրանց ապա-
գայ սերունդի ուսման և կրթութեան գործը, որով
նրանք, ինչպէս ասում էր գեր. եպիսկոպոսը
կուսենաւ մտաւորապէս և բարոյապէս զարդա-
ցած որդիք ու ազգութեան համար պիտանացու
անդամներ: Ինչ և իցէ, Մատրասա ուսումնա-
րանը շնորհիւ իր անխնայ հոգաբարձուների ճըս-
կողութեան, իր գոյութիւնը շարունակում է մին-
չև այսօր բաւական կանոնաւորեալ կերպով: Չը
նայելով որ այս ուսումնարանում գտնվում են
մօտ 80 աշակերտներ, այնու ամենայնիւ ունի
միայն մի ուսուցիչ, որովհետև դեռ նոր հիմն-
ված լինելով, նիւթապէս այնքան ապահոված
չէ, որ կարողանայ երկու կամ աւելի ուսուցիչ
վարձելու: Իսկ ինչ վերաբերում է դպրոցի ու-
սումնական մասին, ի նկատի ունենալով նրա
կարճ ժամանակեւ գոյութիւնը, ոչինչ հայեացք
չէ կարելի գցել նրա վրա: միայն այսքան պէտք
է խոստովանած, որ թէ և նրա աշակերտներ, ա-
ռանց բացառութեան, նոյն իսկ այս ուսումնա-
րանի բազմաթիւ օրից են սկսել իրանց գրագիտու-
թիւնը, և որ նրանք ուսումնարան մտնելիս մի
ամենահասարակ խօսք անգամ չէին հասկա-
նում հայերէն, այնու ամենայնիւ այսքան միջո-
ցում ոչ միայն կարողանում են վարժ կարգալ,
այլ և իրանց կարգապահը պատմել մայրենի
լեզուով:
Արդարեւ սա մի ամենաուրախալի երեւոյթ է
մատրասեցիների համար, որովհետև հեռու չէ
նրանցից այն ապագան, երբ պէտք է տեսնեն
իրանց վաղուց մտացված հարազատ լեզուի
վերականգնումն իրանց որդոց ուսմամբ և դաս-
տիարակութեամբ: Վերջացնում եմ նամակս նրա-
նով, որ աշիւ առաջ ունենալով դպրոցիս ազգու-
սէր հոգաբարձուների անվաստակ հոգատարու-
թիւնները գէպի իրայն հակողութեան յանձնած
զպրոցը, մանաւանդ իրանց գործունէութեան
ընթացքի ամեն մի քայլափոխում աջակից և
օգնական ունենալով պ. Գահիկերեանցի պէս
մի արդիւնաւոր անձն, չէ կարելի չը յուսալ
նրան լաւ ապագայ, Աւելորդ չեմ համարում
այստեղ յայտնել և մեր հրապարակական ամե-
նախորին հոգաբարձուներից մէկին, այն է պ.
Մարգիս Ջանամեանցին իր ջերմ ազգասիրա-
կան զգացմանց համար, որ ուսումնարանի բաց-
ման օրից սկսեալ մինչև այսօր իր սեփա-
կան ծախքով պահպանում է դպրոցիս ուսուց-
չին:
Ս. Լ.
ՆԵՐՍԷՆ ԼՈՒՐԵՆԻ
Ապրիլի 22-ին Էջմիածնից վերադարձաւ Թիֆ-
լիս վիճակաւոր առաջնորդ սրբազան Գաբրիէլ
Ավագովակի արքեպիսկոպոսը:
ՎԱԳԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ հաղորդում են, որ ձե-
պեճեանը վախճանվով հայ երիտասարդների վը-
րէժնագրութենից իր կեղտոտ գործի համար, մի
քանի ժամանակ ծածկված էր Արմաշու վանքի
վարդապետների մօտ և վերջապէս փախաւ
ձգտեալ հազուստով: Խորհուրդ կը տանք վա-
ղարչապատի երիտասարդներին շատ չը նեղանալ
ձեպեճեանից, որովհետև նրա նմանները վա-
ղարչապատում տասնեակներով կան:
ՎԱԳԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ հաղորդում են, որ
այստեղ մտածում են պ. Բէգ-Նազարեանին ձե-
մարանում պաշտօն տալ: Ափսոս կը լինէր, եթէ
պ. Բէգ-Նազարեանը թողնէր Երևանի ուսում-
նարանը, որտեղ նա շատ հարկաւոր է: ձեմա-
րանում պարտը ոչինչ չէ կարող անել, որովհետև
ազատ չի լինի իր գործողութիւնների մէջ:
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՈՒՑ մեզ գրում են. «Բաղա-
քիս աղքատանոցի անյայտ նուիրատուն ամենքի
հետաքրքրութիւնը շարժել է: «Մշակի» ընթեր-
ցողները գիտեն, որ նա մի քանի ժամանակ ա-
ռաջ նուիրել էր 401 բ.: Ամսոյս 21-ին տղայոց

Ն Ն Ե Բ

14—25 (2)

Շուտով հրատարակելու եմ իմ ժողովածու մանկերգոսկրը, որոնք պարունակում են իրանց մէջ շատ էրեւոյճներ ազգային երկրպայեւանցիկ կեանքի կենտրոնացումը։

Տպւելու են բաժանորդագրու թեամբ. ամեն մէկ օրինակի գինը 50 կոպ. է։ Քիֆիւտում բաժանորդ կարելի է գրելից պէտքարիւն ղրկելու համար։

Գ. Երսկանցեանց.

ԻՆՏԵՐՆԵԹ

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի վարչա-
նախարարը յայտնում է, որ իրանց երկխոսու-
մունքներն ընդհատվել են, քանի որ իրանց զորքերը
հիւանդանոցից դուրս են գնացել, որովհետեւ
հիւանդանոցի բնակիչները հրահրել են դեմ
հարձակումներ անել իրանց զորքերի դեմ:
Իրանց զորքերը հիւանդանոցից դուրս
գնացել են 12 ժամ առաջ, որովհետեւ
հիւանդանոցի բնակիչները հրահրել են դեմ
հարձակումներ անել իրանց զորքերի դեմ:

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ